Ալեքսանդր Ծատուրյան

Դեպի վե՛ր

Ես սիրում էի միշտ ելած վերև
Բարձրը սարալանջ, վաղորդյան զովին.
Այնտեղից դիտել երկինք ու արև.
Այնտեղից նայել կապուտակ ծովին:

Այնտեղ, իմ սիրած ընկուզենու տակ,
Թավիշ-դալարում թարմ օդ շընչելով
Ես զմայլում էի, արբենում անհագ,
Հավերժ անհունին հոգիս ձուլելով:

Այնտեղ իմ հոգին ցընորում ազատ,
Ազատ օրհնում էր ջինջ երկնակամար.
Խանդրս էր մաքուր, տենչրս անարատ,
Որպես լեռների կուսական դալար:

Այնտեղ իմ միտքը - արծիվ սըրաթև՛,
Իմ զգացումը - նրման խոր ծովին.
Իմ հանգրվանն էր այնտեղ, միշտ վերև
Վեհ սարալանջը վաղորդյան զովին: